

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
դեկտեմբերի 8-ի նիստի N 49
արձանագրային որոշման

Ռ Ա Ջ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017-2036 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԿՈՇՏ ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԱՐԳԱՑՄԱՆ**

Բովանդակություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	4
2. ԿԿԹԿ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	5
3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ	5
II. ԿԿԹԿ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	7
1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ	7
2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԾԱԽՍՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ.....	10
2.1. Աղբահանության վրա ծախսվող միջոցները	10
2.2. Աղբահանության վճարը և դրույքաչափը.....	13
2.3. Աղբահանության համար հավաքված գումարը.....	13
3. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	15
III. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	18
IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	20
1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ/ԲԱՐԵԼԱՎՈՒՄ.....	21
2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՂԱԴԻԻՉՆԵՐԸ	22
3. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ	23
4. ԱՂԲԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ	24
5. ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ՄԵԾ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	25
6. ԵՄ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ.....	25
7. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ԿԿԹԿ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՋՈՐԱՑՈՒՄԸ.....	26
8. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ.....	26
9. ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ	28

10.	ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ.....	29
11.	ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ	30
12.	ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ ..	30
V.	ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ.....	31
VI.	ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	31
VII.	ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ.....	33
VIII.	ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	33
IX.	ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ.....	34
X.	ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	35

Գծապատկերներ և աղյուսակներ

Գծապատկեր 1. Աղբահանությունը ՀՀ մարզերում և Երևանում	8
Գծապատկեր 2. Աղբահանության, սան. մաքրման և աղբավայրերի շահագործման համար մեկ շնչի հաշվով բյուջետավորված միջոցները	10
Գծապատկեր 3. 2015 թվականին աղբահանության, սան. մաքրման և աղբավայրի շահագործման ծախսերի համամասնություն	12
Գծապատկեր 4. ԿԿԹԿ գործընթացը	23
Գծապատկեր 5. ԿԿԹԿ գործընթացը գյուղերում	25
Աղյուսակ 1. Աղբահանությունը ՀՀ մարզերում և Երևանում.....	7
Աղյուսակ 2. Աղբահանության, սան. մաքրման և աղբավայրերի շահագործման վրա համայնքների կողմից ծախսված միջոցները	10
Աղյուսակ 3. 2015 թվականին աղբահանության, սան. մաքրման և աղբավայրի շահագործման ծախս (1000 ՀՀ դրամ) առանց հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի.....	11
Աղյուսակ 4. Աղբահանության համար գանձվող դրույքաչափեր	13
Աղյուսակ 5. 2015 թվականին աղբահանության համար հավաքված գումար (1000 ՀՀ դրամ)	14
Աղյուսակ 6. Թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների իրավասությունները	15
Աղյուսակ 7. Ռազմավարության իրականացման տրամաբանական հենք.....	20
Աղյուսակ 8. ԿԿԹԿ յուրաքանչյուր ենթագործառույթն ապահովող ֆիզիկական ենթակառուցվածքի անհրաժեշտություն	23
Աղյուսակ 9. ԿԿԹ ՄԿՄ և ինսինտրացիայի ընձեռնած առավելությունները.....	34
Պատկեր 1. Տարածաշրջանային ենթահամակարգեր (9 ենթահամակարգ և 6 ենթահամակարգ)	22

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության 2017-2036թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) գերակա նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին (այսուհետ միասին՝ բաժանորդներ): ԿԿԹԿ հանրապետական համակարգը ներառելու է միմյանցից անկախ գործող, բայց միևնույն պահանջներին ու սկզբունքներին բավարարող ԿԿԹԿ տարածաշրջանային ենթահամակարգեր: Համակարգի ինտեգրվածությունը ենթադրում է թափոնների կառավարման (հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման, իսկ հետագայում նաև վերամշակման) տեխնոլոգիաների և կառավարման համակարգի համադրություն, որը գործելու է ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական կայուն հենքի վրա:

2. Ռազմավարության իրականացման արդյունքում.

1) ՀՀ ամբողջ տարածքը կսպասարկի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի Խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի թիվ 2008/98/EC, 1994 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 94/62/EC և Խորհրդի 1999թ. ապրիլի 26-ի թիվ 1999/31 հրահանգների (դիրեկտիվների) պահանջներին (այսուհետ միասին՝ ԵՄ չափանիշներին) բավարարող ԿԿԹԿ համակարգ, որը կներառի աղբահանությունը և աղբավայրերի շահագործումը:

2) ԿԿԹԿ համակարգը բաղկացած կլինի սահմանափակ թվով տարածաշրջանային ենթահամակարգերից (ոչ ավելի քան 10 տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի շահագործում և ենթահամակարգի համայնքներում աղբահանության իրականացում) և կսպասարկի Հայաստանի Հանրապետության տարածքի 100%:

3) Կհավաքվի Հայաստանի Հանրապետությունում գոյացող (գեներացվող) աղբի առնվազն 95%:

4) Բաժանորդները կտեսակավորեն իրենց կողմից առաջացված (գեներացրած) աղբի մինչև 20%:

5) Նոր համակարգի ներդրմանը զուգընթաց կփակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աղբավայրերը (եթե դրանց արդիականացումը դիտվի ոչ նպատակահարմար):

6) Մասշտաբի էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը: Ռազմավարության իրականացումը չի պահանջի ՀՀ օրենսդրությամբ սահմանված աղբահանության վճարի առավելագույն դրույքաչափի փոփոխություն:

7) Մասշտաբի էֆեկտի շնորհիվ նաև կմեծանա համակարգի գրավչությունը մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար՝ աղբահավաքման արժեշղթայի յուրաքանչյուր օղակում (աղբահանությունից մինչև աղբավայրի շահագործում կամ աղբի վերամշակում):

8) Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը: Աղբից մաքրված լանդշաֆտը կբարձրացնի Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը:

2. ԿԿԹԿ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3. Ռազմավարությունը խարսխված է ՀՀ օրենսդրությամբ ամրագրված հետևյալ սկզբունքների վրա.

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա կոշտ կենցաղային թափոնների բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցում և չեզոքացում.

2) բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովում.

3) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացում.

4) օգտահանման ենթակա թափոնների տեսակավորման, կրկնակի կամ վերաօգտագործման ու վերամշակման համար պայմանների ստեղծում և աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալների նվազեցում.

5) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացում՝ «խելացի» համակարգի ներդրում».

6) ոլորտում միջհամայնքային համագործակցություն.

7) տեխնիկա-տնտեսական հիմնավորված ծախսաձածկող և բնակչության համար մատչելի վարձավճարներ/:

3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

4. Խորհրդային ժամանակներում կային աղբահանության այն ժամանակներին բնորոշ մշակույթ, սովորույթ և ընթացակարգեր: Հետխորհրդային ժամանակաշրջանում այդ ամենը սովորույթի ուժով շարունակվեց, կրեց ձևախեղումներ, որը պայմանավորված էր կոմունալ ծառայությունների կենտրոնացված կառավարման վերացմամբ և համատիրությունների ոչ ամբողջական կայացմամբ: Ձևավորվեցին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց իրավասություններն աղբահանության մասով հստակեցված չէին: Մասնավորապես, տարածքային կառավարման մարմինները աղբահանության գործառույթն իրականացնելու լիազորություններ չստացան: Տեղական ինքնակառավարման մարմինները, հատկապես գյուղերում, պատշաճ վերահսկողության, ֆինանսավորման և համապատասխան ենթակառուցվածքների բացակայության հետևանքով, աղբը սկսեցին հեռացնել աղբահանության համար չհարմարեցված վայրերում:

5. Աղբահանության ոլորտը, թեև տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթ է, անհրաժեշտ է պետական լիազոր մարմինների կողմից այդ գործառույթների համակարգումը, քանի որ թափոնների կառավարումն առնչվում է ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների լիազորություններին:

6. Մասնավորապես՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանվեց արտոնագրված աղբավայր եզրը, սահմանելով տարածքային կառավարման մարմինների չարտոնագրված աղբավայրերը վերացնելու (լիկվիդացնելու) իրավասությունը, մինչդեռ, արտոնագրման գործընթացը և դրա նկատմամբ պահանջները հստակ չեն: Արդյունքում՝ ՀՀ-ում առ այսօր չկան արտոնագրված աղբավայրեր: Արդյունքում, եթե աղբահանությունը, թեև ոչ բավարար մակարդակով, բայց իրականացվում է, աղբավայրերի կառուցումն ու շահագործումը գտնվում է անմխիթար վիճակում:

7. Ստեղծված խնդիրների լուծման ուղղությամբ առաջին քայլերը սկսել են իրականացվել դեռևս մեկ տասնամյակ առաջ: Սակայն, առաջարկված լուծումներն ու իրականացված քայլերը, ընդհանուր տեսլականի բացակայության պայմաններում, հնարավորություն չեն ընձեռում ապահովել ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը՝ առաջարկելով կոշտ կենցաղային թափոնների կառավարման համապարփակ լուծում:

8. Միասնական ռազմավարության անհրաժեշտությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Մասնավորապես.

1) մինչ այժմ ձեռնարկված քայլերը կամ առաջարկվող լուծումներն ունեցել են հատվածային բնույթ և հիմնականում վերաբերել են աղբը հավաքելուն ու առանց տեսակավորելու և խտացնելու բնակավայրից հեռացնելուն: Համայնքային, մասնավոր նախաձեռնությունները, միջազգային հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ, վերաբերում էին կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ասուհետ՝ ԿԿԹԿ) գործընթացում որևէ առանձին բաղադրիչին (պլաստիկ շշերի հավաքում, աղբահանություն, աղբավայրի կառուցում, աղբի վերամշակում և այլն).

2) առաջարկվող լուծումները հիմնականում վերաբերել են ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծմանը կամ բարելավմանը՝ առանց ինստիտուցիոնալ կողմին պատշաճ ուշադրություն դարձնելու.

3) աղբավայրերի շահագործման, արտոնագրման հարցերում պետական կառավարման տարբեր մարմինների լիազորությունները հստակեցման կարիք ունեն.

4) պատշաճ ուշադրություն չի դարձվել պետական և մասնավոր հատվածների համագործակցությանը և ջանքերի համադրմանը.

5) հատվածային և ոչ լիարժեքորեն համակարգված բնույթ են կրում միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր երկրների (կազմակերպությունների) կողմից տրամադրված աջակցությունները. առկա են դեպքեր, երբ տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ընդգրկված տարբեր փորձագետներ միմյանց բացառող լուծումներ են առաջարկել:

9. Այսպիսով, ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է և նպատակահարմար մշակել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ընդհանուր ռազմավարություն, որը կուրվագծի կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) բնագավառում պետության քաղաքականությունը, նախընտրելի լուծումները և ակնկալվող արդյունքները:

10. Ամփոփելով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման սույն

Ռազմավարությունը հիմնված է Ասիական զարգացման բանկի օժանդակությամբ 2013 թվականին եվրոպական փորձագետների կողմից իրականացված «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» ուսումնասիրությամբ ներկայացված առաջարկների և վերլուծությունների հիման վրա:

II. ԿԿԹԿ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ


11. 2016 հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության 896 համայնքներից 489 համայնքներ (54.6%), իրենց բյուջեներում, աղբահանության գումար են նախատեսել: Սակայն, հաշվի առնելով, որ աղբահանությունը, հիմնականում, իրականացվում է Հայաստանի Հանրապետության մեծ համայնքներում, աղբահանության ծառայություններից օգտվում է ՀՀ ընդհանուր բնակչության 89 տոկոսը: Այս առումով, ամենաբարվոք վիճակը Երևան քաղաքում է՝ 100%, ՀՀ Շիրակի (92.2%), Կոտայքի (87.5%) և Արարատի (87.4%) մարզերում: Աղբահանության ամենացածր տոկոսն ՀՀ Արագածոտնի մարզում է՝ 65%, ՀՀ Շիրակի մարզի բնակչության մեծ ներգրավվածությունը պայմանավորված է Գյումրիի մեծ տեսակարար կշռով: Մինչդեռ Շիրակում համայնքների ներգրավվածությունը խիստ ցածր է, օրինակ՝ Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում աղբահանություն կազմակերպված է միայն մեկական համայնքներում:

12. Ստորև բերված աղյուսակն ու գծապատկերներն առավել տեսանելի են նկարագրում ՀՀ տարածքում աղբահանության վիճակը:

Աղյուսակ 1. Աղբահանությունը ՀՀ մարզերում և Երևանում

Մարզեր և Երևան	Համայնքների թիվը	Բնակչության թիվը	Աղբահանություն			
			Ըստ համայնքների քանակի		Ըստ բնակչության թվի	
Երևան	1	1054698	1	100%	1054698	100%
Արագածոտն	114	125539	51	45%	81541	65%
Արարատ	97	246880	88	91%	215768	87%
Արմավիր	97	256639	87	90%	200564	78%
Գեղարքունիք	92	211828	38	41%	179402	85%
Լոռի	107	217103	47	44%	177081	82%
Կոտայք	67	245324	54	81%	214533	87%
Շիրակ	119	233308	62	52%	170084	73%
Սյունիք	102	119873	14	14%	78281	65%
Վայոց ձոր	44	47659	20	45%	37999	80%
Տավուշ	56	112920	27	48%	85031	75%
Ընդամենը՝ ՀՀ-ում	896	2871771	489	55%	2494982	87%

Գծապատկեր 1. Աղբահանությունը ՀՀ մարզերում և Երևանում



13. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության դիտարկումներով Հայաստանի Հանրապետությունում, թերևս բացի Երևան քաղաքից, աղբահանության մակարդակը հեռու է բավարար լինելուց, նույնիսկ այն համայնքներում, որտեղ աղբահանություն իրականացվում է: Մասնավորապես, կարելի է առանձնացնել 3 հիմնական խնդիրներ.

1) Մեքենաների և սարքավորումների ոչ պիտանիություն պայմաններում աղբը հավաքվում է բաց աղբամաններում, ինչը սանիտարահիգիենիկ, բնապահպանական և էսթետիկ խնդիրներ է առաջացնում: Աղբամաններից բեռնատարներ է բարձրվում բախտի միջոցով: Բեռնատարների զգալի մասը բաց թափքով է, ինչի արդյունքում, աղբը տեղափոխելիս այն ցրվում է մեծ տարածությունների վրա:

2) Աղբահանության ամբողջականությունը բացակայում է զգալի թվով համայնքներում, որտեղ այդ ծառայությունը հասանելի չէ համայնքի ողջ բնակչությանը: Խնդիրն առավել լուրջ է գյուղերում: Արդյունքում՝ կենցաղային աղբը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ կոնտեյներներում, աղբախցերում պահելու փոխարեն, անկանոն կերպով թափվում է համայնքի մերձակա տարածքներում կամ նույնիսկ ոռոգման ջրանցքներում:

3) Աղբահանության հաճախականությունը ևս խնդիր է: Չնայած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N1161-Ն որոշման N1 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, զգալի թվով համայնքներում աղբահանության սահմանված հաճախականությունը փոքր է կամ հաստատված ժամանակացույցը խախտվում է, ինչի արդյունքում ընդհանուր օգտագործման տարածքներում աղբի կուտակումը ստեղծում է հակասանիտարական և ոչ էսթետիկ իրավիճակ:

14. Հավաքված աղբը տեղադրելու հարցում խնդիրներն ավելի լուրջ են: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գնահատականներով, Հայաստանում գործում է առավել քան 450 աղբավայր: Աղբավայրերը քարտեզագրված չեն, նրանց սահմանները հստակ չեն, աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալներն ու բաղադրությունը հայտնի չեն: Աղբավայրերի մեծ մասը որոշակի առանձնացված տարածքներ,

որտեղ որևէ կառավարում չի իրականացվում, կամ իրականացվում է խիստ սահմանափակ ծավալով կամ ոչ բավարար որակով: Արդյունքում՝ ստեղծվել է մարդու և բնության համար անբարենապաստ միջավայր:

15. ԿԿԹԿ բնագավառում ստեղծված իրավիճակին նպաստում են մի քանի առարկայական և ենթակայական պատճառներ: Մասնավորապես.

1) Բարոյապես և ֆիզիկապես մաշված ֆիզիկական ենթակառուցվածքներում կապիտալ ներդրումներ կամ չեն արվել, կամ արվել են ոչ բավարար ծավալով, կամ էլ ընտրողաբար՝ մի քանի համայնքներում:

2) Աղբահանության և ԿԿԹԿ պատշաճ համակարգի բացակայությունը նպաստել են չկարգավորված աղբաթափության սովորության ձևավորմանը, ինչը հղի է սանիտարական և բնապահպանական վտանգավոր հետևանքներով, բացասաբար է ազդում զբոսաշրջության զարգացման վրա, ինչպես նաև էսթետիկական տեսանկյունից տհաճ է:

3) Հասարակության շրջանում առկա է աղբահանության ծառայության դիմաց վճարելու դժկամություն: Ծառայության դիմաց վարձավճարների հաշվառման և գանձման ոչ բավարար մակարդակը էապես նվազեցնում է աղբահանության իրականացման և համակարգի արդիականացման համար հասանելի միջոցները:

4) Համայնքային միջոցների սղությունն ու մասնավոր հատվածի կողմից հետաքրքրվածության բացակայությունը բավարար չեն բարձրորակ ծառայություններ մատուցելու համար, իսկ ֆոնդային միջոցների բացակայությունը պատճառ է ներդրումների բացակայության:

5) ԿԿԹԿ բնագավառում տեղական ինքնակառավարման (ՏԻ) մարմինների լիազորությունների ոչ ամբողջականությունը ևս ազդում է աղբահանության մակարդակի վրա: ՏԻ մարմինները պատասխանատու են աղբահանության համար, սակայն պատասխանատու չեն իրենց վարչական տարածքներում գտնվող աղբավայրերի շահագործման համար:

6) Հայաստանի բնակչության կեսից ավելին բնակվում է Երևանում կամ Երևանի անմիջական հարևանությամբ (մինչև 50 կմ): Որպես հետևանք՝ Հայաստանում գոյացող կոշտ թափոնների մեծամասնությունը նույնպես կենտրոնացած է Երևանում:

7) Լեռնային ռելիեֆը նույնպես ազդում է աղբահանության աշխատանքների վրա: Հայաստանի Հանրապետության լեռնային ռելիեֆը հանրապետության որոշ բնակավայրերի տրանսպորտային հասանելիության հետ կապված որոշակի դժվարություններ է ստեղծում:

8) Ելնելով որոշ համայնքների հեռավորությունից և (կամ) սակավ բնակեցվածությունից՝ հեռավոր և նոսր բնակեցված համայնքների ԿԿԹ կառավարումը բավականին ծախսատար է:

9) Աղբահանության ոչ պատշաճ կազմակերպման, աղբահանության պայմանագրով չնախատեսված վայրերում աղբ թափելու համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները կիրառվում են ոչ հետևողական: Չնայած ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43¹ հոդվածը վարչական պատասխանատվություն (տուգանք) է նախատեսում աղբահանության ոչ ժամանակին կազմակերպման, ինչպես նաև չնախատեսված վայրերում աղբ թափելու համար, սակայն այդ տուգանքները, հիմնականում, կիրառվում են ընտրողաբար և շատ հազվադեպ:

2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԾԱԽՍՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԸ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ

2.1. Աղբահանության վրա ծախսվող միջոցները

16. ՀՀ համայնքներն իրենց համայնքային բյուջեներում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման համար որոշակի ֆինանսական միջոցներ են նախատեսում: Եթե համայնքի տարածքում գործում է նաև աղբավայր, ապա աղբավայրի շահագործման համար նույնպես միջոցներ են հատկացվում: 2015 թվականին աղբահանության, սանիտարական մաքրման և աղբավայրերի շահագործման համար Հայաստանի Հանրապետությունում բյուջետավորվել է 8,8 մլրդ. ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ համայնքային բյուջեների եկամտի ընդամենը 30 տոկոսն է ձևավորվում սեփական միջոցների հաշվին, կարելի է մոտարկել, որ 8.8 մլրդ. ՀՀ դրամից առավել քան 6 մլրդ. ՀՀ դրամը ծախսվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:


17. Ստորև բերված աղյուսակն ամփոփում է աղբահանության համար 2016թ. համայնքների կողմից բյուջետավորված միջոցները:

Աղյուսակ 2. Աղբահանության, սան. մաքրման և աղբավայրերի շահագործման վրա համայնքների կողմից ծախսված միջոցները

Մարզեր և Երևան	Բնակչության թիվը	Աղբահանության սան. մաքրման և աղբավայրի շահագործման համար բյուջետավորված տարեկան գումար	Մեկ շնչի հաշվով բյուջետավորված տարեկան գումար	Մեկ շնչի հաշվով բյուջետավորված ամսական գումար
Երևան	1 054 698	5 449 950 000	5 167	431
Արագածոտն	125 539	106 168 600	846	70
Արարատ	246 880	317 368 000	1 286	107
Արմավիր	256 639	316 725 000	1 234	103
Գեղարքունիք	211 828	277 526 000	1 310	109
Լոռի	217 103	486 593 000	2 241	187
Կոտայք	245 324	875 791 000	3 570	297
Շիրակ	233 308	172 481 000	739	62
Սյունիք	119 873	432 084 000	3 605	300
Վայոց ձոր	47 659	115 210 000	2 417	201
Տավուշ	112 920	294 549 000	2 608	217
Ընդամենը՝ ՀՀ	2 871 771	8 844 436 000	3 080	257

Գծապատկեր 2. Աղբահանության, սանմաքրման և աղբավայրերի շահագործման համար մեկ շնչի հաշվով բյուջետավորված միջոցները

Մեկ շնչի հաշվով աղբահանության վրա ծախսված ամսեկան գումար



18. Ստորև ներկայացված աղյուսակում, մարզերի մեծ քաղաքների համար, երեք ուղղություններով 2015 թվականին կատարված ծախսերն առավել մանրամասնեցված են:


Աղյուսակ 3. 2015 թվականին աղբահանության, սան. մաքրման և աղբավայրի շահագործման ծախս (1000 ՀՀ դրամ) առանց հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի

Քաղաք	Սան. մաքրում (Առանց փողոցների լվացման և ձյան մաքրման)	Աղբավայրի շահագործում	Աղբահանություն
Երևան	5064963		
Արագածոտնի մարզ			
Աշտարակ	20070	7080	18570
Ապարան	7754	650	6570
Թալին	1850	1537	9909
Արարատի մարզ			
Արտաշատ	32828	0	31945
Արարատ	32979	810	22795
Մասիս	37036	14520	20165
Վեդի	14300	0	18600
Արմավիրի մարզ			
Արմավիր	59830	4476	30410
Էջմիածին	55106	29831	107131
Մեծամոր	16000	40	8200
Գեղարքունիքի մարզ			
Գավառ	2024	728	33649
Մարտունի	790	2540	39600
Վարդենիս	-	1191	19707
Սևան	30811	4824	33069
Լոռու մարզ			
Վանաձոր	62519		197802
Սյիսուակ	15798	2889	19375

Այվերդի	19858	3582	36744
Ստեփանավան	33655		14850
Տաշիր	12162		19760
Կոտայքի մարզ			
Հրազդան	55100	20557	53073
Արուսեան	81971	4080	103766
Չարենցավան	41977	1873	46000
Շիրակի մարզ			
Գյումրի	140 964	9 520	67 637
Արթիկ	10 482	0	14 979
Մարալիկ	9 247	1 641	11 061
Սյունիքի մարզ			
Կապան	57708	41850	13640
Սիսիան	36048	500	27125
Մեղրի	6893	4689	13478
Ագարակ	6723	0	20552
Գորիս	11000	4300	36977
Վայոց ձորի մարզ			
Եղեգնաձոր	16853	1023	2740
Վայք	3806	0	4381
Ջերմուկ	39245	1496	4527
Տավուշի մարզ			
Իջևան	35580	3071	31867
Դիլիջան	32300	1500	23886
Բերդ	21000	0	18900
Նոյեմբերյան	633	0	1440
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀՀ (առանց Երևանի)	1 062 900	170 798	1 184 880

19. Ստորև բերված գծապատկերի վրա ծախսերի համամասնությունն ավելի պատկերավոր է:

Գծապատկեր 3. 2015 թվականին աղբահանության, սան. մաքրման և աղբավայրի շահագործման ծախսերի համամասնություն



2.2. Աղբահանության վճարը և դրույքաչափը

20. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ աղբահանության վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Աղբահանության դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին: Աղբահանության վճարը սահմանված է նույն օրենքի 14-րդ հոդվածով և կազմում է ամսական առավելագույնը 400 ՀՀ դրամ մեկ բնակչի համար, կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են ՀՀ որոշ քաղաքների կողմից գանձվող աղբահանության դրույքաչափերը:

Աղյուսակ 4. Աղբահանության համար գանձվող դրույքաչափեր

Համայնք	Դրույքաչափ (ՀՀ դրամ)	Համայնք	Դրույքաչափ (ՀՀ դրամ)
Երևան	200	Կոտայքի մարզ	
Արագածոտնի մարզ		Հրազդան	200
Աշտարակ	150	Աբովյան	250
Ապարան	100	Չարենցավան	200
Թալին	100	Շիրակի մարզ	
Արարատի մարզ		Գյումրի	100
Արտաշատ	100	Արթիկ	120
Արարատ	180	Մարալիկ	100
Մասիս	180	Սյունիքի մարզ	
Վեդի	150	Կապան	150
Արմավիրի մարզ		Սիսիան	150
Արմավիր	100	Մեղրի	400
Էջմիածին	150	Ագարակ	400
Մեծամոր	100	Գորիս	150
Գեղարքունիքի մարզ		Վայոց ձորի մարզ	
Գավառ	150	Եղեգնաձոր	210
Մարտունի	150	Վայք	100
Վարդենիս	0	Ջերմուկ	100
Սևան	200	Տավուշի մարզ	
Լոռու մարզ		Իջևան	100
Վանաձոր	150	Դիլիջան	100
Սպիտակ	150	Բերդ	120
Ալավերդի	150	Նոյեմբերյան	100
Ստեփանավան	150		
Տաշիր	100		

21. Անհրաժեշտ է նշել, որ առնվազն երկու քաղաք՝ Մեղրին և Ագարակը, աղբահանության համար գանձում են օրենքով սահմանված աղբահանության վարձի առավելագույն դրույքաչափը: Վարդենիս քաղաքում աղբահանությունն իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով:

2.3. Աղբահանության համար հավաքված գումարը

22. 2015 թվականին ՀՀ որոշ քաղաքներում հավաքված աղբահանության վճարն ամփոփված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 5. 2015 թվականին աղբահանության համար հավաքված գումար (1000 ՀՀ դրամ)

Քաղաք	Ֆիզիկական անձանցից	Իրավաբանական անձանցից
Երևան	1 619 663	1 214 594
Արագածոտնի մարզ		
Աշտարակ	10560	4090
Ապարան	4171	3461
Թալին	2581	1208
Արարատի մարզ		
Արտաշատ	11705	3531
Արարատ	37448	7597
Մասիս	13621	6544
Վեդի	15165	2609
Արմավիրի մարզ		
Արմավիր	23640	7791
Էջմիածին	92151	22285
Մեծամոր	7519	684
Գեղարքունիքի մարզ		
Գավառ	14501	5755
Մարտունի	14270	7457
Վարդենիս	—	—
Սևան	19022	11041
Լոռու մարզ		
Վանաձոր	108240	25100
Սպիտակ	12884	3149
Ալավերդի	10397	4802
Ստեփանավան	9897	2648
Տաշիր	3152	1120
Կոտայքի մարզ		
Հրազդան	55034	14757
Աբովյան	115742	26466
Չարենցավան	40465	3722
Շիրակի մարզ		
Գյումրի	90 457	85 289
Արթիկ	6 544	6 675
Մարալիկ	475	592
Սյունիքի մարզ		
Կապան	31539	27392
Սիսիան	16709	10838
Մեղրի	8762	6117
Ագարակ	12960	10700
Գորիս	14149	6128
Վայոց ձորի մարզ		
Եղեգնաձոր	6686	32970
Վայք	4231	1326
Ջերմուկ	3875	57406
Տավուշի մարզ		
Իջևան	5435	6585
Դիլիջան	7778	12392
Բերդ	5261	4657
Նոյեմբերյան	736	2744
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀՀ	2 457 425	1 652 222

23. Աղյուսակ 5-ից երևում է, որ ֆիզիկական անձանցից գանձվել է ընդհանուր աղբահանության վճարի 60%:

3. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24. Թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, հատկապես «Թափոնների մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ ԿԿԹԿ գործընթացում պետական կառավարման տարբեր մարմինների լիազորությունները ամփոփված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6. Թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների իրավասությունները

Պետական կառավարման մարմին	Իրավասություն
<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տարածքային կառավարման մարմիններ</p>	<ol style="list-style-type: none"> 1. մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական քաղաքականության ձևավորմանը. 2. մասնակցություն թափոնների գործածության ոլորտի պետական ծրագրերի կազմմանը. 3. թափոնների գործածության ոլորտում իրենց վարչական տարածքի սահմաններում տարածքային նշանակության ծրագրերի կազմումը և դրանց իրականացման համակարգումը. 4. իրենց վարչական սահմաններում թափոնների տեղադրման վայրերի լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված թույլտվություններ տալը. 5. իրենց վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման սխեմաների կազմումը և աղբահանության նկատմամբ հսկողության իրականացումը. 6. թափոնների գոյացման, մշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի գրանցամատյանների կազմումը և վարումը. 7. թափոնների գոյացման, մշակման, վնասազերծման, օգտահանման ու հեռացման, հաշվառման և դրանց անձնագրավորման կազմակերպումը. 8. իրենց վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը). 9. իրենց վարչական տարածքի սահմաններում ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության ներգրավման կազմակերպումը:
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<ol style="list-style-type: none"> 1. մասնակցությունը թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանը. 2. թափոնների գործածության ոլորտում նպատակային ծրագրերի կազմումը.

	<p>3. թափոնների պետական հաշվառման իրականացումը.</p> <p>4. թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի վերաբերյալ համաձայնություն տալը.</p> <p>5. թափոնների գոյացման ծավալների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումը.</p> <p>6. օրենքով սահմանված կարգով թափոնների գոյացման, մշակման, օգտահանման, տեղադրման և հեռացման ժամանակ պոլիգոնների, համալիրների, շինությունների և այլ հատուկ հատկացված վայրերի կամ օբյեկտների շինարարության, վերակառուցման և շահագործման նախագծային փաստաթղթերի ու համալիր ծրագրերի պետական բնապահպանական փորձաքննության իրականացումը.</p> <p>7. թափոնների պետական կադաստրի վարումը.</p> <p>8. թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների կազմման, վարման, ինչպես նաև մոնիթորինգի (մշտադիտարկում) իրականացումը.</p> <p>9. թափոնների գործածության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը և իր իրավասության սահմաններում գերատեսչական իրավական ակտերի ընդունումը.</p> <p>10. հեռացման վայրերի պետական դիտանցի (մոնիտորինգի) իրականացման կարգերի մշակումը</p> <p>11. ՀՀ տարածքում սպառման թափոնների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգումը</p> <p>12. շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտման, թափոնների կառավարման ապահովումը</p> <p>13. բնապահպանական պետական տեսչության աշխատանքների համակարգումը և բնապահպանական վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակման ապահովումն ու իր իրավասության սահմաններում դրանց հաստատումը.</p> <p>14. բնապահպանական պետական տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը.</p> <p>15. փորձաքննության գործընթացին վերաբերող քաղաքականության մշակումն ու իր իրավասության սահմաններում դրա իրականացումը.</p> <p>16. փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակումը.</p> <p>17. իր իրավասության սահմաններում փորձաքննության գործընթացին վերաբերող միջազգային համագործակցության իրականացումը.</p> <p>18. անդրսահմանային ազդեցություն ունեցող</p>
--	---

	<p>հիմնադրութային փաստաթղթի կամ գործունեության փորձաքննական եզրակացության տրամադրումը</p> <p>19. օրենքով սահմանված հիմքերով ու կարգով՝ անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փորձաքննական եզրակացության կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.</p> <p>20. իր կողմից պատվիրվող կամ նախաձեռնվող հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության գնահատումների իրականացումը կամ կազմակերպումը.</p> <p>21. անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ գործունեության փորձաքննության գործընթացում փորձագետների ներգրավումը.</p> <p>22. օրենքով սահմանված կարգով փորձաքննական եզրակացության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.</p> <p>23. սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փորձաքննության գործընթացում հանրության ծանուցման և մասնակցության հնարավորության ապահովումը.</p>
<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>1. թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը և թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական և հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.</p> <p>2. թափոնների բացասական ներգործությունից մարդու առողջության պաշտպանության միջոցառումների գերակա ուղղությունների մշակումը և դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը.</p> <p>3. թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի սահմանման վերաբերյալ համաձայնություն տալը:</p>

25. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տիրույթում գտնվող գործնական հարթության վրա իրականացվող աղբահանությունը կարգավորվում է մասնավորապես, համայնքի ավագանու կայացրած որոշումների հիման վրա

(աղբահանության դրույքաչափի սահմանում, աղբահանության իրականացման կարգի հաստատում և այլն): Ավելին.

1) համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ արտաբյուջետային հաշվից,

2) համայնքի տարածքում համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը կամ օպերատորները,

3) աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով,

4) կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում (ամբարվում) է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ,

5) Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները:

26. Անհրաժեշտ է հստակեցնել, որ ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերի շահագործումը չի մտնում տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների մեջ, իսկ աղբահանության վճարը չի ներառում աղբավայրում աղբի տեղադրման հետ կապված ծախսերը:

III. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

27. Չնայած որ ռազմավարության մեկնարկը պետք է տրվի 2017 թվականին՝ 2004 թվականից սկսած իրականացվել են ռազմավարության տրամաբանությանը համահունչ և ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացմանը նպաստող գործողություններ: Ծրագրերը ֆինանսավորվել են պետական ու համայնքային բյուջեների և միջազգային (արտասահմանյան) կազմակերպությունների կողմից: Մասնավորապես՝

1) «Եվրամիության աջակցությամբ 2004 թվականին իրականացվել է ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կայուն կառավարման ինտեգրված ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է աղբահանության համակարգը երկու մարզերում և ներկայացվել են ոլորտի բարելավմանն ուղղված համապատասխան օրենսդրական ու ինստիտուցիոնալ առաջարկությունները.

2) Ճապոնական Շիմիցու կորպորացիայի կողմից Կիոտոյի արձանագրության շրջանակներում 2005 թվականին իրականացվել է «Հայաստանի Գյումրի և Վանաձոր քաղաքների աղբավայրերում կենսազազի օգտահանման տեխնիկա-տնտեսական հիմնավորում» ծրագիրը:

3) Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Գերմանական «Ֆիխտներ» ընկերության կողմից 2008-2010 թվականներին ուսումնասիրվել է Երևան քաղաքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

4) Գերմանիայի դաշնային բնապահպանական գործակալության ֆինանսավորմամբ 2009-2011թթ. պատրաստվել է «Հայաստանում կենցաղային թափոնների վերամշակումը» զեկույցը, որում ուսումնասիրվել է Հայաստանի 5 համայնքների՝ Վանաձորի, Էջմիածնի, Սևանի, Թալինի և Մխչյանի աղբի կառուցվածքը՝ սեզոնային առանձնահատկություններով:

5) 2010-2013 թվականներին ԵՄ պատվիրակության ֆինանսավորմամբ իրականացվել է «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք» տարածաշրջանային ծրագիրը (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ռուսաստան և Ուկրաինա), որի շրջանակներում մշակվել է ՀՀ Լոռու մարզի բոլոր համայնքների աղբահանության համակարգի ձևավորման, տարածաշրջանային աղբավայրերի ստեղծման ռազմավարությունը՝ ֆինանսական, տնտեսական և տեխնիկական բաղադրիչների զարգացման առաջարկություններով:

6) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի նիստի N 22 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծը:

7) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ 2009-2011թթ., ՀՀ քաղաքաշինության նախարարության գործընկերությամբ, ուսումնասիրվել է ՀՀ Կոտայքի մարզում և Սևան քաղաքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ընդհանուր համակարգի ստեղծման իրագործելիությունը, որն արտացոլվել է «Կոտայքի մարզի և Սևան քաղաքի կոշտ կենցաղային թափոնների կառավարումը» զեկույցում: 2014թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ծրագրի իրագործման համար վարկ ներգրավելու նպատակով բանակցություններ վարելու լիազորությամբ: Բանակցությունների ընթացքում կարևորվել է ծրագրի ընդլայնումը և ՀՀ Գեղարքունիքի մարզի ներառման իրագործելիության ուսումնասիրությունը: 2016թ. հուլիսին սկսվել է ծրագրի իրականացումը, որի համար ներգրավվել են 11 մլն եվրո ֆինանսական միջոցներ, որի կեսն ապահովվել է դրամաշնորհներով, մյուս կեսը՝ վարկով 15 տարի մարման ժամկետով:

8) Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ 2013թ. մշակվել է «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» փաստաթուղթը, որն ամփոփ կերպով ներկայացրել է ԿԿԹԿ բնագավառում տվյալ պահին տիրող իրավիճակը և ԿԿԹԿ ազգային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ գործողությունները: Ծրագրի 2-րդ փուլով, 2016թ, ՀՀ Շիրակի մարզի համար մշակվել է մարզային աղբավայրի կառուցման տեխնիկա-տնտեսական հիմնավորումը:

9) Գերմանական զարգացման բանկի ֆինանսավորմամբ 2012թ. իրականացվել է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման համակարգ, Վանաձոր» ծրագիրը, որի արդյունքում մշակվել է ՀՀ Լոռու մարզում ԿԿԹ կառավարման բարելավման տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունը:

10) Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ մշակվում է «Հեռավոր և փոքր համայնքների համար կոշտ թափոնների կառավարման լուծումներ» զեկույցը: Աշխատանքը ներկայացվելու է 2016 թ. վերջին:

11) ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1268-Ա և թիվ 45 արձանագրային որոշմամբ, ՀՀ Արմավիրի մարզում չեխական ներդրողին է օտարվել հողատարածք՝ ԿԿԹ վերամշակման գործարանի և ջերմոցային տնտեսություն հիմնելու համար:

12) ՀՀ Արագածոտնի մարզպետի նախաձեռնությամբ տեղական ներդրողի միջոցներով դադարեցվել է 3-րդ մայրուղու Աշտարակ-Էջմիածին հատվածի երկայնքով Աշտարակի աղբավայրի գործունեությունը և Սասունիկ համայնքի վարչական տարածքում Աշտարակի տարածաշրջանի համայնքների համար սկսվել է նոր աղբավայրի կառուցման աշխատանքները:

13) 2015-2016 թվականներին Երևանի քաղաքապետարանի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև համագործակցության շրջանակում՝ բանկի միջոցներով, ավստրիական «Bernard Ingenieure» խորհրդատվական ընկերության կողմից իրականացվել է Երևանում նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման բնապահպանական ու սոցիալական ազդեցության ուսումնասիրության ծրագիրը»:

14) 2016 թվականի մեկնարկել է Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակում, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, եվրոպական ներդրումային բանկի վարկային և Արևելյան եվրոպայի էներգաարդյունավետության և շրջական միջավայրի գործընկերության (E5P) և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի դրամաշնորհային միջոցների հաշվին գործող Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերի ԵՄ չափանիշներին համապատասխան մեկուսացման, նոր աղբավայրի կառուցման և շահագործման մրցութային գործընթացը:

IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

28. Ռազմավարության իրականացման տրամաբանական հենքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Ռազմավարության իրականացման ուղղությունները սահմանվել են տրամաբանական հենքի համաձայն:

Աղյուսակ 7. Ռազմավարության իրականացման տրամաբանական հենք

Տրամաբանական հենքի տարր	Նկարագրություն	Կատարողականի ցուցանիշ
Վերջնական արդյունք	Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը ներառող, ԵՄ չափանիշներին բավարարող, կոշտ կենցաղային թափոնների	1. ՀՀ տարածքի մաս, որտեղ ԿԿԹ կառավարումն իրականացվում է համաձայն ԵՄ ստանդարտներին, արտահայտված տոկոսով.

	կառավարման ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահապանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու համակարգի բաժանորդներին:	2. Հայաստանում գոյացած աղբի հավաքում, արտահայտված տոկոսով. 3. Բաժանորդների կողմից աղբյուրի մոտ տեսակավորված աղբ, արտահայտված տոկոսով: 4. Աղբի տեսակավորման և վերամշակման գործընթացներում մասնավորի ներգրավում:
Ուղղակի արդյունք 1	Մարզերում ԿԿԹԿ ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծում:	1. ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրեր. 2. Աղբի փոխանցման կայաններ. 3. Աղբի հավաքման մասնագիտացված մեքենաներ. 4. Աղբի հավաքման կոնտեյներներ. 5. Աղբի նախնական տեսակավորման համար անհրաժեշտ կոնտեյներներ:
Ուղղակի արդյունք 2	Գործող աղբավայրերի գույքագրում և փակում	Փակված աղբավայրերի քանակ
Ուղղակի արդյունք 3	ԿԿԹԿ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի ստեղծում:	1. ԿԿԹԿ համակարգի լիազոր մարմին. 2. Աղբահանություն իրականացնող և ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերը շահագործող մասնագիտացված ընկերություններ:
Ուղղակի արդյունք 4	Ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման մեխանիզմի ստեղծում	Ֆինանսավորման համակարգ:
Ուղղակի արդյունք 5	Ռազմավարության իրականացման նպատակով ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի փոփոխություն	Փոփոխված օրենքներ և ընդունված ենթաօրենսդրական ակտեր:

29. Ներկայացված տրամաբանական հենքի համաձայն ռազմավարությունն իրականացվելու է 4 ուղղությամբ.

- 1) Ֆիզիկական ենթակառուցվածքի ստեղծում/բարելավում,
- 2) Ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի ստեղծում,
- 3) Ֆինանսավորման մեխանիզմի ապահովում,
- 4) Օրենսդրական դաշտի վերանայում:

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ/ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

30. ԿԿԹԿ հանրապետական համակարգը ներառելու է միմյանցից անկախ գործող, սահմանափակ թվով (ոչ ավելի, քան տասը), ԵՄ չափանիշներին բավարարող,

տարածաշրջանային ենթահամակարգեր: Ենթահամակարգերի քանակն ու տեղակայումը պետք է որոշվեն առանձին ուսումնասիրությունների արդյունքում:

31. Ընտրությունը կատարվում է հետևյալ չափորոշիչներով.

1) ծախսարդյունավետություն և ծառայության մատչելիություն,

2) բնությանը հասցվող նվազագույն վնաս


3) կոմերցիոն գրավչություն՝ ներառյալ պետական-մասնավոր գործընկերային

մեխանիզմների միջոցով:

32. Յուրաքանչյուր ենթահամակարգում ընդգրկված համայնքներին տրամադրվելու է աղբահանության ամբողջական ծառայություն, որը ներառում է աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրերում, ինչպես նաև աղբավայրերի շահագործում: Որևէ ենթահամակարգում համայնքի ներառման չափորոշիչն է ծախսարդյունավետությունը՝ աղբահանության համար գանձվող նվազագույն դրույքաչափի գանձումը: Կբարելավվի վարձավճարների հավաքագրումը: Ծառայության ծախսաձածկումը կապահովվի բաժանորդների և համայնքների կողմից կատարված վճարների հաշվին: Համայնքների վճարները կներառեն նաև սանիտարական մաքրման ծախսերը:

33. Ենթահամակարգերի հնարավոր սահմաններն ուրվագծված են ստորև բերված պատկերի վրա: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գնահատականներով, առավել նպատակահարմար է դիտարկել ինը կամ վեց ենթահամակարգերից բաղկացած համակարգ:


Պատկեր 1. Տարածաշրջանային ենթահամակարգեր (9 ենթահամակարգ և 6 ենթահամակարգ)



2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

34. ԿԿԹԿ ֆիզիկական ենթակառուցվածքն ապահովելու է ԿԿԹԿ ողջ գործընթացի սահուն իրականացումը: Գծապատկերային եղանակով ԿԿԹԿ գործընթացը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

Գծապատկեր 4. ԿԿԹԿ գործընթացը



35. ԿԿԹԿ գործընթացի վերլուծության հիման վրա ուրվագծվում են ֆիզիկական ենթակառուցվածքի բաղադրիչները, որոնք ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 8. ԿԿԹԿ յուրաքանչյուր ենթագործառույթն ապահովող ֆիզիկական ենթակառուցվածքի անհրաժեշտություն

Ենթագործառույթ	Ենթակառուցվածք
Աղբահանություն	Համայնքներում աղբահավաքությունն իրականացնող մեքենաներ, աղբամաններ և աղբի հավաքման կետեր
Աղբի տեսակավորում	Շուկայական արժեք ունեցող, վերամշակվող թափոնների համար նախատեսված տարաներ
Աղբի փոխադրում մեծ տարածություններ	Փոխանցման կայաններ և մեծ տարողությամբ մեքենաներ (տրեյլերներ)
Աղբի տեղադրում և թաղում	ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրեր

3. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

36. Քաղաքներում աղբահանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) ավագանիների որոշումներով հաստատել աղբահանության իրականացման սանիտարական սխեմաները,

2) սանիտարական սխեմաների համաձայն քաղաքներում և գյուղերում բավարար քանակով աղբատար մասնագիտացված մեքենաներով ապահովում,

3) սանիտարական սխեմաների համաձայն համայնքներում 700 - 1100 լ տարողությամբ կոնտեյներներով (աղբամաններով) ապահովում:

37. Մեքենաների անհրաժեշտ քանակը, աղբի հավաքման կետերի քանակը և յուրաքանչյուր կետում հավաքվող աղբի ծավալը պետք է որոշվի յուրաքանչյուր տարածաշրջանի համար առանձին իրագործելիության ուսումնասիրության ժամանակ:

38. Քաղաքներում հավաքված աղբը պետք է տեղափոխվի կամ միանգամից դեպի ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր, կամ փոխանցման կայան՝ այնուհետև աղբավայր (*տե՛ս գծապատկեր 4*): Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը: Նպատակահարմար է տեղափոխումն իրականացնել 10 – 20 մ3 թափքի ծավալ ունեցող աղբատար մեքենաներով: Վերամշակման ենթակա աղբը, համապատասխան հատուկ մեքենաներով կտեղափոխվի փոխանցման կայաններ (*տե՛ս գծապատկեր 4*):

39. Այն գյուղական բնակավայրերում, որոնք հասանելի են աղբատար մեքենաների համար, աղբը կհավաքվի նույն սկզբունքով ինչ քաղաքներում, սակայն ավելի փոքր հաճախականությամբ, օրինակ՝ շաբաթը մեկ անգամ:

40. Դժվարանցանելի գյուղերում կկառուցվեն գյուղական աղբի հավաքման կետեր, որպեսզի վերջ տրվի աղբի անկանոն թափման կամ աղբը բաց այրելու պրակտիկային: Մեկ հավաքման կետը կարող է սպասարկել մի քանի գյուղերի: Աղբը, փոքր տարողունակությամբ բեռնատարներով կամ տրակտորներով կարող է տեղափոխվել հավաքման կետ: Հավաքման կետերը, որպես կանոն, ասֆալտապատված, ցանկապատված տարածքներ են, որտեղ տեղադրվում են 5 մ3 տարողությամբ մի քանի աղբամաններ: Հավաքման կետերը պետք է տեղակայվեն բնակավայրերի հիմնական ճանապարհների երկայնքով, որոնք անցանելի պետք է լինեն մեծ տարողունակությամբ աղբահավաք մեքենաների համար: Կետերը պետք է բեռնատարների համար հարմար մուտք ունենան, որպեսզի հնարավոր լինի աղբամանները միանգամից դատարկել բեռնատարների մեջ:

41. Այսպիսով, նախորդ պարբերության մեջ նկարագրված գյուղերում աղբահանությունը կազմակերպելու համար համայնքներն իրենք պետք է կենցաղային աղբը հասցնեն հավաքման կետ՝ համայնքի ավագանու կողմից հաստատված աղբահանության իրականացման կարգի համաձայն: Եթե մի կետը սպասարկելու է մի քանի գյուղերի, անհրաժեշտ կլինի հաստատել միջհամայնքային սանիտարական սխեմաներ:


4. ԱՂԲԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ

42. Առավել արդյունավետ է, երբ կենցաղային թափոններում պարունակվող շուկայական արժեք ներկայացնող, վերամշակման ենթակա աղբից օգտակար մնացորդներն օգտահանվում են հենց աղբյուրի (արտադրողի) մոտ: Այսինքն՝ անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել, որ բաժանորդներն իրենք իրենց կենցաղային աղբի միջից տեսակավորեն վերամշակման ենթակա կենցաղային թափոնները: Այդ նպատակով, աղբի հավաքման կետերում, աղբի կոնտեյնրների հարևանությամբ, կտեղադրվեն վերամշակվող թափոնների զետեղման կոնտեյնրներ՝ նախատեսված ապակու, թղթի/ստվարաթղթի, պլաստիկի/պոլիէթիլենի, մետաղների համար: Այստեղ պետք է հիմնական դերակատարում ունենա մասնավոր սեկտորը, որի նախաձեռնությամբ կապահովվի տեսակավորված աղբի հավաքումն ու դրանց վերամշակումը կամ կրկնակի օգտագործումը:

43. Հաշվի առնելով գյուղերի կենցաղային աղբի բաղադրությունը՝ այնտեղ աղբի նախնական տեսակավորման կոնտեյնրների տեղադրում չի նախատեսվում: Սակայն, կարելի է դիտարկել օրգանական աղբի կոմպոստացման հնարավորությունները:

44. Գյուղերում կենցաղային աղբի կառավարման սխեման ներկայացված է ստորև:

Գծապատկեր 5. ԿԿԹԿ գործընթացը գյուղերում



5. ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ՄԵԾ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

45. Փոխանցման կայանների կառուցման հիմնական նպատակն է՝ թափոնների՝ դեպի տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրեր տեղափոխման, ծախսերի նվազեցումը, քանի որ փոխանցման կետերից աղբն աղբավայրեր տեղափոխվում են խտացում ապահովող մեքենաներով: Բացի այդ, փոխանցման կայանները լրացուցիչ հնարավորություններ են ստեղծում աղբահանությամբ զբաղվող փոքր կազմակերպությունների համար, որոնք կարող են աղբը շրջակա բնակավայրերից միանգամից տեղափոխել դեպի փոխանցման կայան:

46. Փոխանցման կայանների քանակը, բաշխումն ու տարողունակությունը պետք է որոշվի յուրաքանչյուր մարզի կամ մարզերի խմբերի համար իրականացվելիք ուսումնասիրության ժամանակ:

6. ԵՄ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

47. Համայնքներից հավաքված կոշտ կենցաղային թափոնները կտեղադրվեն ԵՄ չափանիշներին բավարարող, սահմանափակ թվով (ոչ ավելի, քան տասը) տարածաշրջանային ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերում: Յուրաքանչյուր աղբավայրը, միջինում, կարող է զբաղեցնել 20 հա տարածք և ունենալ միջինը՝ 20 տարվա շահագործման ժամկետ: Աղբավայրերը կազմված կլինեն մինչև 3 հա տարածք ունեցող բջիջներից, որոնք իրենցից ներկայացնում են ֆիլտրատների հավաքման ջրհորդաններ, որոնցից ֆիլտրատները հատուկ խողովակներով փոխադրվում են դրանց հավաքման կամերաներ: Բջիջների կառուցումը ուղեկցվում է միատարր կավաշերտի խտացմամբ, բարձր խտության պոլիէթիլենի, գետտեքստիլ և մանրախճի դրենաժային շերտերի տեղակայմամբ: Շահագործման ժամկետի ընթացքում աղբավայրի բջիջներում աղբը պետք է լցվի սահմանված

չափանիշներին համաձայն, պարբերաբար տոփանելով և խտացնելով մինչև 1տ/ մ3 խտության և պարբերաբար կավահողով կամ չափանիշներին համապատասխան այլ նյութերով ծածկելով: Լցված բջիջները պետք է ծածկվեն ավելի մեծ հողաշերտով ու խոտածածկով և նոր բջիջներ ստեղծվեն: Նախնական ուսումնասիրությունների արդյունքում նպատակահարմար է համարվել բջիջներից յուրաքանչյուրի կյանքի տևողությունը սահմանել միջինը 3 տարի: Կտեղադրվի կենսագազի հավաքման համակարգ, որը հետագայում կարող է ծառայել ջերմություն կամ էլեկտրաէներգիա ստանալու համակարգեր ստեղծելու համար:

48. Յուրաքանչյուր աղբավայրում պետք է հստակեցվի տեղադրվող աղբի տեսակները, ինչպես նաև անհրաժեշտ է ներդնել մեծածավալ /մեծ գաբարիտներով/, էլեկտրոնային և վտանգավոր թափոնների հավաքման և դրանց հետագա օգտահանման, վնասագերծման և հեռացման գործընթացները:

49. Քանի որ աղբավայրի շահագործման դադարեցումից հետո մինչև 30 տարի, աղբաջրերի և աղբավայրի գազի պատճառով, դեռևս պահպանվում է շրջակա միջավայրի աղտոտման վտանգը, աղբավայրի կառուցման և շահագործման ծախսերը հաշվարկելիս պետք է հաշվի առնել նաև աղբավայրի հետագա պահպանման և վնասակար ազդեցությունների չեզոքացման ու աղբավայրի փակման ծախսերը:

50. Նոր աղբավայրերի կառուցմանը և շահագործմանը զուգընթաց անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն գործող՝ սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրերի փակման ուղղությամբ՝ ներառյալ աղբավայրերի գույքագրումը, աղբի և մեծածավալ թափոնների մեկանգամյա հեռացումը, համապատասխան լաբորատոր փորձաքննության և դրենաժային միջոցառումների իրականացումը:

7. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ԿԿԹԿ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՁՈՐԱՑՈՒՄԸ

51. ԿԿԹԿ ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորումը կոչված է լինելու երեք խնդիրների լուծմանը.

- 1) ԿԿԹԿ ռազմավարության իրականացումը համակարգող լիազոր մարմնի սահմանում
- 2) Մասնագիտացված օպերատորների ստեղծում և (կամ) կազմակերպչական հզորացում
- 3) Պետական – մասնավոր գործընկերության խրախուսում:

8. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

52. ԿԿԹԿ ռազմավարության իրականացումը պահանջում է լիազոր մարմնի կառուցվածքում համապատասխան կառույցի ստեղծում (առանց լիազոր մարմնի համար հաստատված հաստիքների թվի ավելացման), որը կհամակարգի և կվերահսկի Ռազմավարության իրականացումը: Լիազոր մարմնի պարտականությունները պետք է ներառեն ԿԿԹ կառավարման ոլորտի պետական նորմավորման, տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, մոնիտորինգի համակարգի ներդնումը, ինչպես նաև Ռազմավարության իրականացման մեջ ներգրավված միջազգային ֆինանսական հաստատությունների, դոնոր երկրների և կազմակերպությունների հետ աշխատանքների և

նրանց կողմից տրամադրված ֆինանսական, խորհրդատվական և տեխնիկական օժանդակության համադրումը:

53. Լիազոր մարմնին կից կգործի միջգերատեսչական խորհուրդ՝ բաղկացած ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, բնապահպանության, առողջապահության, էկոնոմիկայի նախարարություններից, քաղաքաշինության պետական կոմիտեից, և այլ գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներից: Միջգերատեսչական խորհուրդը պարբերաբար կլսի զեկույցները ՀՀ տարածքում ԿԿԹԿ ռազմավարության իրականացման վերաբերյալ, ինչպես նաև կհանդիսանա միջգերատեսչական քննարկումների հարթակ:

54. Մասնագիտացված օպերատորների ստեղծում և (կամ) կազմակերպչական հզորացում:

55. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին անմիջականորեն իրականացնում են համայնքային հիմնարկները կամ օպերատորը: Հայաստանի Հանրապետության համայնքների աղբահանությունն իրականացվում է մեծամասամբ համայնքային հիմնարկների միջոցով: Մասնագիտացված օպերատորների ծառայություններից օգտվում են մի քանի համայնքներ, ներառյալ Երևանը: Սակայն, առկա օպերատորները միայն տրամադրում են աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ. որևէ մասնագիտական ընկերություն մարզերում աղբավայրի կառավարում չի իրականացնում: Նախատեսվում է, որ Կոտայք-Գեղարքունիքի ենթահամակարգում աղբահանություն, աղբի տեղափոխում և նոր կառուցվող աղբավայրի շահագործումը կիրականացնի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի քաղաքների կողմից հիմնադրված ընկերությունը:

56. Կոտայք-Գեղարքունիքի ենթահամակարգում կիրառված կոշտ կենցաղային թափոնների կառավարման ողջ արտադրական շղթայի ուղղահայաց ինտեգրված մոտեցումը, երբ աղբահանությունից մինչև աղբի տեղափոխումն, աղբավայրում տեղադրումն ու աղբավայրի շահագործումն իրականացվում է մեկ ընկերության կողմից կարող է կիրառելի չլինել մյուս ենթահամակարգերի համար: Ելնելով տեղական առանձնահատկություններից և ծախսերի արդյունավետության պահանջներից, ԿԿԹԿ գործընթացի տարբեր ենթագործընթացներ կարող են ապահովվել տարբեր ընկերությունների կողմից: Ընդ որում, պարտադիր պայման չէ, որ ենթահամակարգի բոլոր համայնքների աղբահանությունն իրականացնի միևնույն օպերատորը: Նմանապես, ենթահամակարգի փոխանցման կայան(ներ)ի շահագործումը կարող է (են) իրականացնել կամ առանձին ընկերություն(ներ), կամ աղբահանություն իրականացնող ընկերություններ, կամ ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրը շահագործող ընկերությունը: Որոշակի մուտքի վարձի դիմաց թե՛ փոխանցման կայանը, թե՛ աղբավայրը պետք է բաց լինեն միևնույն ենթահամակարգի ներսում գործող աղբահանություն իրականացնող ընկերությունների համար: Ընդ որում, գերիշխող դիրքի չարաշահումը աղբավայրը և/կամ փոխանցման կայանը շահագործող ընկերությունների կողմից պետք է բացառվի:

57. Ակնհայտ է, որ ԿԿԹԿ բարեփոխումների հաջողությունն էապես կախված է աղբահանություն և աղբավայրերի շահագործումն իրականացնող համայնքային հիմնարկների և օպերատորների աշխատանքի որակից: Ուստի, անհրաժեշտ է մասնագիտացված ընկերությունների ստեղծումը (եթե այդպիսիք չկան) և/կամ կազմակերպչական հզորացումը, ներառյալ.

- 1) կառավարման համակարգերի ներդրումը (որակի կառավարում, աշխատանքի անվտանգություն, բնապահպանական նորմեր և այլն),
- 2) աշխատակիցների ընտրությունն ու վերապատրաստումը,
- 3) հաշվապահական հաշվառման ապահովումը,
- 4) բիզնես գործընթացների քարտեզագրումն ու համապատասխան գործառնական փաստաթղթերի մշակումը,
- 5) տեղեկատվության կառավարման համակարգերի նախագծումն ու ներդրումը:

58. Աղբահանություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ որևէ սահմանափակում չկա, սակայն խրախուսելի է մասնավոր հատվածի ընկերությունների ներգրավումը:

9. ՊԵՏԱԿԱՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

59. Մասնավոր հատվածի ներգրավումն ապահովելու համար, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, նախատեսվում է մշակել և ներդնել պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմներ, որի արդյունքում մասնավոր հատվածի ընկերությունները կտրամադրեն ավանդաբար պետական հատվածի կողմից տրամադրվող ծառայությունները: Պետական-մասնավոր գործընկերության արդյունքում հնարավոր կլինի.

- 1) ներգրավել ներդրումներ մասնավոր հատվածից,
- 2) բարձրացնել ԿԿԹԿ ծառայություններ մատուցող ընկերությունների գործառնական արդյունավետությունը և ծառայությունների մատուցման որակը,
- 3) երկարացնել կնքվող պայմանագրերի ժամկետայնությունը և մեծացնել օպերատոր ընկերության ներգրավվածությունը՝ ԿԿԹԿ համակարգի նախագծումից մինչև ֆիզիկական ենթակառուցվածքի շինարարություն և շահագործում:

60. Պետական-մասնավոր գործընկերությունը ենթադրում է պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշ գործառույթների փոխանցում մասնավոր հատվածին: Ընդ որում, գործընկերության տեսակը կարող է շատ լայն լինել՝ վճարովի ծառայություններ մատուցելու պայմանագրից և լիզինգից սկսած մինչև կոնցեսիոն պայմանագրեր և ֆիզիկական ենթակառուցվածքներ կառուցելու ու շահագործելու պայմանագրեր:

61. Անհրաժեշտ է նշել, որ մասնավոր կազմակերպությունների ներգրավումն ու պետական-մասնավոր գործընկերության գործիքակազմի կիրառումն ինքնանպատակ չէ՝ հաշվի առնելով, որ մասնավոր հատվածի ներգրավումը լրացուցիչ ռեսուրսներ է ենթադրում: Որոշում կայացնելիս վճռորոշ նշանակություն ունի ռիսկի գործոնը: Մասնավոր հատվածի և պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառումը պետք է խթանվի, եթե

նիսկերի արդյունավետ կառավարման միջոցով կնվազեն համակարգի շահագործման ծախսերը:

10. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

62. Սույն Ռազմավարության իրականացման շահառուն Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչությունն է, քանի որ կոշտ կենցաղային թափոնների կառավարումը կենսական նշանակություն ունի երկրի թե՛ տնային տնտեսությունների, թե՛ կազմակերպությունների համար: Այնուամենայնիվ, կառանձնացնենք 3 խումբ շահառուների.

1) Բնակիչներ (ֆիզիկական անձիք)

ա. Պահանջվող առողջապահական նորմերին չբավարարող աղբավայրերի գոյությունն անմիջական սանիտարա-համաճարակային ռիսկ է հանրապետության բնակչության համար: Բնապահպանական նորմերի խախտումը վնաս է հասցնում շրջակա միջավայրին, ինչն անդրադառնում է մարդկանց առողջության և նյութական բարեկեցության վրա: ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերի կառուցման և շահագործման նորմերի ու կանոնների սահմանումն ու կիրառումը կչեզոքացնեն այդ ռիսկերը:

բ. Այսօր էական թվով համայնքներում իրականացվող անկանոն աղբահանությունն անհարմարություններ է ստեղծում բնակիչների համար: Մասնավորապես, սանիտարական մաքրման կարգի խախտումներն անորոշ են դարձնում աղբահանության գրաֆիկը, ինչն առավել ցայտուն է երևում այն համայնքներում, որտեղ աղբի հավաքման կոնտեյներներ կամ չկան, կամ կան անբավարար քանակով:

գ. Սույն ռազմավարության իրականացմամբ նաև կբարելավվի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը: Նախ, աղբահանության կազմակերպված իրականացումն ու աղբավայրերի շահագործումը նախատեսում է համապատասխան կազմակերպությունների կարողությունների հզորացում, ինչի արդյունքում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր: Բացի այդ, կոշտ կենցաղային թափոնների կառավարման արդյունքում աղբից կմաքրվեն թե՛ հանրապետության համայնքները, թե՛ շրջակա միջավայրն, ինչը Հայաստանն էլ ավելի գրավիչ կդարձնի զբոսաշրջիկների համար: Զբոսաշրջիկների հոսքի ավելացումը կավելացնի այդ բնագավառում ընդգրկված աշխատողների թվաքանակը և եկամուտները:

2) Կազմակերպություններ (իրավաբանական անձինք)

ա. Սույն ռազմավարության շահառուներից են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունները: Կազմակերպությունները նույնպես թափոններ ստեղծողներ են: Հետևաբար, թափոնների գործուն համակարգի ներդրումից նրանք նույնպես կշահեն:

բ. Թափոնների կառավարման համակարգի ստեղծումը գործարար հնարավորություններ կընձեռնի այն ձեռնարկությունների համար, ովքեր կցանկանան զբաղվել աղբահանությամբ կամ աղբավայրերի շահագործմամբ: Նմանապես, ավելի բարվոք իրավիճակ կստեղծվի ներգնա տուրիզմով զբաղվող ընկերությունների համար (տե՛ս նախորդ կետը):

3) Համայնքներ

ա. Ռազմավարությամբ նախատեսվում է էապես բարելավել Հայաստանի Հանրապետության համայնքների աղբահանությունը ինչպես նաև կարգավորել աղբավայրերի կառուցումն ու շահագործումը: Համայնքները և նրանց հարակից տարածքները կմաքրվեն կուտակված աղբից: Արդյունքում, կվերանան առողջապահական և բնապահպանական

ռիսկերը, համայնքներում կատեղծվի բնակության համար ավելի հարմարավետ միջավայր, կբարձրանա համայնքների գրավչությունը զբոսաշրջիկների համար:

11. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

63. Նույնականացվել են ռազմավարության իրականացման 3 հիմնական ռիսկեր.

1) Արտասահմանյան ֆինանսավորման բացակայություն կամ ոչ բավարար մակարդակ

ա. Ռազմավարության իրականացումը պահանջում է առնվազն 90 մլն. եվրո: Յուրաքանչյուր ենթահամակարգի ֆինանսավորման համար տարվում են առանձին բանակցություններ (առավել մանրամասների համար տե՛ս Գլուխ VI): Եթե ռազմավարության իրականացման համար արտաքին ֆինանսական միջոցներ չապահովվեն, Ռազմավարության իրականացումը կֆինանսավորվի այլ աղբյուրներից, մասնավորապես կարող է ֆինանսավորվել ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

2) Աղբահանության վճարի դրույքաչափի վրա ճնշում

բ. նախնական հաշվարկների համաձայն Ռազմավարության իրականացումը կարող է չպահանջել աղբահանության վճարի դրույքաչափի ՀՀ օրենսդրությամբ սահմանված առավելագույն արժեքի վերանայում, բայց աղբահանության և աղբավայրերի կառավարման համակարգի արդիականացումն, անխուսափելիորեն, կհանգեցնի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ինքնարժեքի բարձրացմանը: Արդյունքում, որոշ համայնքներ ստիպված կլինեն վերանայել ներկայումս գործող դրույքաչափերը:

3) Մասնավոր հատվածի կողմից բավարար հետաքրքրվածության բացակայություն

գ. Ռազմավարության հաջողությունն էապես կախված է մասնավոր հատվածի ներգրավումից: Սակայն, առկա է ռիսկ, որ բավարար քանակով մասնավոր ընկերություններ հետաքրքրված չլինեն աղբահանության իրականացմամբ կամ աղբավայրերի շահագործմամբ, եթե տվյալ ենթահամակարգում նախատեսվի մասնավոր աղբավայրի կառուցումը, կամ պետական աղբավայրի շահագործումը մասնավոր ընկերության կողմից: Այս դեպքում, աղբահանությունը կշարունակվի իրականացվել համայնքային հիմնարկների կողմից, իսկ աղբավայրերի շահագործումը՝ պետական հիմնարկների կամ ամեն ենթահամակարգի շահառու քաղաքների մասնակցությամբ ստեղծված ընկերությունների կողմից (այսինքն՝ կգործարկվի ներկայումս Կոտայք-Գեղարքունիքի ենթահամակարգում փորձարկվող մոդելը):

12. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

64. Սույն Ռազմավարությունը նախատեսված է 20 տարվա համար՝ 2017 թվականից մինչև 2036 թվականը:

65. Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառում ազգային համակարգող մարմնի ստեղծումը նախատեսված է 2017 թվականին:

66. Յուրաքանչյուր ենթահամակարգի ստեղծման աշխատանքները կարելի է բաժանել 4 փուլի.

1) Յուրաքանչյուր ենթահամակարգի

2) համար իրագործելիություն ուսումնասիրության իրականացում.

3) Յուրաքանչյուր ենթահամակարգի տեխնիկատնտեսագիտական հիմնավորման մշակում.

4) Յուրաքանչյուր ենթահամակարգի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովում.

5) ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրի, փոխանցման կայանների կառուցում և աղբահանության իրականացման համար մասնագիտացված մեքենաների, աղբի կոնտեյներների ձեռքբերում և տեղադրում:

67. Դեռևս բոլոր ենթահամակարգերի համար իրագործելիության ուսումնասիրությունները չեն ավարտվել: Հետևաբար, ռազմավարության իրականացման առանձին փուլերը վերջնականապես կհստակեցվեն, երբ պատրաստ լինեն ենթահամակարգերի իրագործելիության ուսումնասիրությունները և լուծվեն ֆինանսավորման խնդիրները:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՐՈՁԱՐՇԱՎ

68. Ռազմավարության իրականացմանը զուգընթաց հանրապետության ողջ տարածքում պետք է իրականացվի հանրային իրազեկման քարոզարշավ, որի նպատակը պետք է լինի հասարակության մեջ սերմանել և ամրապնդել աղբի ծավալների նվազեցման միջազգայնորեն ընդունված 3R (reduce, reuse, recycle – նվազեցնել, բազմակի անգամ օգտագործել, վերամշակել) սկզբունքը:

69. Նվազեցնելու (reduce) սկզբունքը հիմնականում վերաբերվում է գնումների սահմանափակմանը: Մասնավորապես, խրախուսվում է գնել միայն այն, ինչ անհրաժեշտ կամ այնքան, որքան անհրաժեշտ է, քանի որ չօգտագործված ցանկացած իր պոտենցիալ աղբ է: Օրինակ՝ խորհուրդ է տրվում գնել այնքան սննդամթերք, որքան հնարավոր է սպառել, կամ սահմանափակել փաթեթավորման միջոցների՝ տոպրակների, թղթի, տուփերի գնումը և օգտագործումը:

70. Բազմակի անգամ օգտագործելու (reuse) սկզբունքը խրախուսում է գնել բազմակի օգտագործման համար նախատեսված ապրանքներ (օրինակ՝ կտորից տոպրակներ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված պոլիէթիլենային տոպրակների փոխարեն) կամ որևէ իր դեմն նետելուց առաջ փորձել օգտագործել նորովի (օրինակ՝ որևէ փաթեթավորման տուփի կամ տարայի օգտագործումը որպես պահատուփ):

71. Վերամշակել (recycle) սկզբունքը խրախուսում է թափոնների վերամշակումն օգտակար առարկայի (օրինակ՝ թղթի թափոնի վերամշակում թղթի), որը կկանխի օգտակար իրերի և նյութերի վատնումը և նոր ռեսուրսների օգտագործումը: Վերամշակման ժամանակ, որպես կանոն, փոփոխվում են թափոնների ֆիզիկական հատկությունները:

VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

72. Հայաստանի Հանրապետության տարածքում ԵՄ չափանիշներին բավարարող ԿԿԹԿ համակարգ ներդնելու համար պահանջվող բյուջեն մոտավորապես կազմում է 90 մլն. եվրո: Ընդ որում, կիրառվելու է համաֆինանսավորման սկզբունքը՝ պետական, համայնքային բյուջեների, մասնավոր և այլ դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին՝ ՊՄԳ գործիքների կիրառմամբ, որոնց մասնաբաժինները կհստակեցվեն ծրագրերի իրականացման ժամանակ: Առավել մանրամասն բյուջե կարելի է ձևավորել միայն տարածաշրջանային ԵՄ

չափանիշներին համապատասխան աղբավայրերի կողմից սպասարկման տարածքների և աղբավայրերի տեխնիկական պարամետրերի հստակեցումից, անհրաժեշտ մյուս ենթակառուցվածքների (փոխանցման կայաններ, աղբատար մեքենաներ և այլն) հաշվարկից հետո: Քանի որ ստեղծվող ենթակառուցվածքը սպասարկելու է աղբահանության բաժանորդներին (ֆիզիկական և իրավաբանական անձանց) և համայնքներին՝ սանիտարական մաքրման համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների աղբից մաքրման և համայնքների ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկման մասով, ապա համակարգի ներդրման ծախսերը պետք է ծախսաձածկվեն 3 շահառուների աղբահանության վճարների միջոցով: Ընդ որում, այս պահանջը չի բացառում համայնքների կողմից իրենց բնակիչների աղբահանության վճարի մասնակի սուբսիդավորումը:

73. Երևանի կոշտ թափոնների կառավարում» ծրագրի համար նախատեսվում է 24,0 մլն եվրո, որից 8,0 մլն եվրո վարկային միջոցները տրամադրվում են ՎՋԵԲ-ի կողմից, 8,0 մլն եվրո վարկային միջոցներ՝ Եվրոպական ներդրումային բանկի կողմից, ևս 8,0 մլն եվրո դրամաշնորհ նախատեսվում է ներգրավել ԵՄ հարևանության ներդրումային գործիքի միջոցով:

74. «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով նախատեսվում է բարելավել 2 մարզերի աղբահանության համակարգը և կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 11 մլն. եվրո: 2016 թվականի ապրիլի 5-ին ՀՀ-ի և ՎՋԵԲ-ի միջև ստորագրված 5.5 մլն. եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի համաձայն՝ 3.5 մլն եվրոն նախատեսված է ՀՀ Կոտայքի մարզի և 2,0 մլն. եվրոն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև 5.5 մլն եվրո գումարի չափով դրամաշնորհային միջոցների ներգրավում, որից 3.5 մլն եվրոն՝ ԵՄ հարևանության ներդրումային գործիքի միջոցով և 2,0 մլն եվրոն՝ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության (E5P) հիմնադրամի միջոցով:

75. Նախատեսվում է 6,3 մլն եվրո վարկային և 4 մլն դրամաշնորհային միջոցների ներգրավում Գերմանական զարգացման (KfW) բանկից ՀՀ Լոռու մարզի և Դիլիջան քաղաքի ենթահամակարգի զարգացման համար, ինչպես նաև 16 մլն եվրո՝ Ասիական զարգացման բանկից ՀՀ Շիրակի մարզի ենթահամակարգերի ներդրման ծրագրերի իրականացման համար:

76. Հանրապետական Ռազմավարությունն օտարերկրյա վարկային ու դրամաշնորհային ռեսուրսներից բացի կարող է իրականացվել նաև պետական բյուջեի միջոցներով և մասնավոր ներդրումներով (պետական-մասնավոր գործընկերության դեպքում): Պետական մասնակցության ձևաչափը կարող է հստակեցվել միայն որևէ ենթահամակարգի ֆինանսավորման կարիքների և ոչ պետական միջոցների առկայության հստակեցումից հետո:

77. Ընդ որում, միջազգային ֆինանսական հաստատություններից վարկեր և դրամաշնորհներ կարող են ներգրավել թե՛ օպերատոր ընկերությունները, թե՛ ՀՀ կառավարությունը՝ օպերատորներին վերավարկավորելու նպատակով: Ընդ որում, վարկեր կարող են ներգրավել օպերատորների կողմից վարկային միջոցների ծախսաձածկման պարագայում:

VII. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

78. Սույն ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել մի շարք օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում: Մասնավորապես, ի թիվս այլոց, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել Լիազոր մարմնի գործառույթները, ինչպես նաև վերանայել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշ իրավասությունները:

79. Օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել, որ.

1) ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրեր կարող են կառուցվել միայն ՀՀ կառավարության որոշմամբ և Լիազոր մարմնի կողմից հաստատված աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման նորմերին համապատասխան.

2) ԿԿԹ համար իրավաբանական անձանց կողմից վճարվող բնապահպանական վճարներն ուղղվում են ԿԿԹԿ համակարգի պահպանմանն ու արդիականացմանը.

3) կոշտ կենցաղային թափոնները չեն կարող դասակարգվել, որպես վտանգավոր թափոններ:

80. Անհրաժեշտ է նաև խստացնել աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելու, ինչպես նաև չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված և (կամ) նախատեսված աղբավայրերից դուրս աղբ թափելու, աղբահանության պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելու (թափելու) համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները և խստորեն կիրառել դրանք:

Սույն բաժնով նշված օրենսդրական բարեփոխումները նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության կողմից ռազմավարությունը հավանության արժանանալուց հետո 11-ամսյա ժամկետում:

Մասնավորապես. նախագծի հավանության արժանանալուց հետո՝ երկամսյա ժամկետում կմշակվի և ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

VIII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

81. Սույն Ռազմավարությունը վերաբերում է կոշտ կենցաղային թափոնների հավաքմանը, փոխադրմանը և ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերում տեղադրմանը և աղբավայրերի շահագործմանը, ինչպես նաև նշված գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ձևավորմանը, ռազմավարության ֆինանսավորմանը և անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններին: Սույն ռազմավարությունը չի անդրադառնում ԿԿԹ կառավարման այլընտրանքային մոտեցումներին, ինչպիսիք են կենցաղային թափոնների մեխանիկա-կենսաբանական մշակումը (ՄԿՄ) և աղբի փակ այրմանը (ինսիներացիա՝ էներգիա ստանալու նպատակով աղբի այրում):

82. Աղբի մեխանիկա-կենսաբանական մշակումը աղբի մշակման տեխնոլոգիա է, որի ժամանակ աղբից, մեխանիկական եղանակով, որոշ բաղադրիչներ հեռացվում են, իսկ մնացած բաղադրիչները ենթարկվում են կենսաբանական մշակման, ինչը հնարավորություն է տալիս աղբից կորզել օգտակոր մնացորդները և նվազեցնել մնացորդային աղբի ծավալները:

83. Աղբի ինսիներացիան (փակ այրումը) աղբի ջերմային մշակման տեխնոլոգիա է, որը կարող է 95 տոկոսով նվազեցնել մնացորդային աղբի ծավալը և ստանալ ջերմային էներգիա;

84. ՄԿՄ և փակ այրման ընձեռած առավելություններն ամփոփված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 9. ԿԿԹ ՄԿՄ և ինսիներացիայի ընձեռնած առավելությունները

ՄԿՄ	Այրում /Ինսիներացիա/
Նվազեցնում է աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալը՝ նպաստելով աղբահանության ինքնարժեքի իջեցմանը:	Նվազեցնում է աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալը՝ նպաստելով աղբահանության ինքնարժեքի իջեցմանը:
ԿԿԹ-ում նվազեցնում է կենսաքայքայվող օրգանական նյութերի քանակը՝ պակասեցնելով աղբավայրային կեղտաջրերի և գազի արտադրության ծավալները:	Աղբի այրումից կարելի է ստանալ ջերմային և էլեկտրական էներգիա:
Մեծացնում է ԿԿԹ-ից շուկայական արժեք ունեցող, վերամշակման ենթակա թափոնների օգտահանման տոկոսը:	

85. Հաշվի առնելով ՄԿՄ և աղբի փակ այրման ընձեռած հնարավորությունները՝ անհրաժեշտ է իրականացնել ծախսեր-օգուտների վերլուծություն՝ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման նպատակահարմարությունը գնահատելու համար:

IX. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

86. Սույն Ռազմավարության ընդունումից հետո՝ մինչև 2017 թվականի վերջը, պետք է մշակվեն բոլոր տարածաշրջանային ենթահամակարգերի տեխնիկա-տնտեսական իրականացման նախագծերը, որոնք կսահմանազատեն ԿԿԹ-Կ տարածաշրջանային ենթահամակարգերը, կորոշվի ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայրերի տեղակայման վայրերը, աղբավայրերի տարողունակությունը, փոխանցման կայանների քանակը, տեղակայումն ու տարողունակությունը, ինչպես նաև աղբահանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքի տեխնիկական նկարագրությունը:

87. Օտարերկրյա պետությունների և դոնոր կազմակերպությունների հետ պետք է աշխատանքներ իրականացվեն սույն Ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ միջոցների, մասնավորապես՝ դրամաշնորհների ներգրավման ուղղությամբ:

X. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

88. Սույն Ռազմավարության դրույթներն ու դրանցից բխող օրենսդրական կարգավորումներն անցումային շրջանում չեն տարածվում այն համայնքների, բաժանորդների կամ օպերատորների վրա, որոնց սպասարկող ենթահամակարգը դեռևս չի գործում: